ԳԵՂԱՄ ՏԷՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Բ. ՏԱՐԻ Թիւ 9 (21) ՄԱՐՏ 1928

ԱՄԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԴԱՐՄԱՆԸ

Ընթերցո՛ղ, մի՛ չիկնիր, մի՛ ամչնար, կարդա՛ այս յօդուածը ծայրէ՛ ծայր, հակառակ անոր որ Նոր Մայթուսականները սակաւածնութիւն կը քարոզեն քեզի և ուրիշին։

Սեռային գործարաններու վերաբերեալ հարցեր չօշափել՝ դատապարտելի է մեր յետամնաց երկիրներու և պահպանողական դասակարգերու համար։ Սակայն մենք՝ Բուժարարի ընթերցողները աւելի ողջմիտ նկատելով, անվերապահ, գրի առինք այս տողերը, այն համոզումով, թէ օգտակար պիտի բլլանք շատ մը Հայերու, որոնք, դատակի ի խնդիր, հոկայ դումարներ կը ծախսեն շարլաթաններու շլացուցիչ խօսքերէն տարուելով։

Մանրամասնութիւնները բացատրել, ձեր բժիշկներուն թողլով, անցնինք մեր նիւթին, տալով ամփոփ և հակիրճ ծանօթութիւններ, լուսաբանելով ձեր միտքը։

Ամրութիւնը (դատակ չունենալ) հասկնալէ առաջ, անհրաժեշտ է սեռային գործարաններու մարդակազմութիւնը և բնախօսութիւնը հասկնալ։

Սեռային գործարանները մեծապէս կը տարբերին երկու սեռերուն մէջ։ Սերնդագործումի տեսակէտով, առնական գործարաններուն մէջ էն կարեւորն է ամորձիքը, որուն մէջ կը կազմուի սերմնակենդանին։

Իգական սեռային գործարաններուն մէջ, նոյն տեսակէտով, կարեւոր գործարաններն են ձուարանները և արգանդը։ Առաջինին մէջ կ՚ստեղծուի միաբջիջ ձուն կամ հաւկիթը, իսկ երկրորդին մէջ կ՚աճի արդասաւորուած սաղմը։

Արդ՝ սերնդագործումի համար էական գործողութիւնն է, սերմնակենդանիին միացումը իգական ձուին հետ, ինչ որ կը կոչուի արգասաւորութիւն:

Ուրեմն արգասաւորումը արգիլող ոեէ պատճառ կարող է նաև պատճառ դառնալ ամլութեան: Որովհետև առանց արգասաւորումի, սերնդագործութիւն չի լինիր: Մէկ խօսքով, առանց աքլորի հետ գտնուող հաւուն հաւկիթին, հաւու ձագ չի լինիր:

Ուրեմն, նոյն ուղղութեամբ մտածելով, կրնանք հետեւցնել, թէ տղամարդուն պարտականութիւնն է, իր գործարաններուն մէջ արտադրուած սերմնակենդանին արգանդը հասցնել, որպէսզի միանայ իգական հաւկիթին հետ:

Հետեւաբար տղամարդը եթէ թերանայ իր մատուցումին մէջ, արդիւնքը կ՚ըլլայ ամլութիւն: Ամլութեան առնական պատճառները ամփոփենք ստորեւ:

1· — Զուգաւորումը յաջողցնելու համար անհրաժեշտ եղած կանգնումի պակաս, այսինքն անկարողութիւն:

2· — Անդամի չափազանց կարճութիւն և կամ մարդակազմական թերութիւններ:

3· — Ամորձիքներու բորբոքում, ջերմամիզութեան, սիֆիլիսի կամ ոեէ հիւանդութեան պատճառաւ:

4· — Սերմնամբարի բորբոքում:

5. — Շագանակագեղձատապ (prostatite):

6· — Ընդհանուր հիւծող հիւանդութիւններ, ինչպէս շաքարախտ և հիւծախտ:

7· — Սերմնակենդանիի անշարժութիւն:

Կը հաստատուի, թէ ամլութեան 45% տոկոսով պատասխանատուութիւնը կը ծանրանայ տղամարդու ուսերուն վրայ:

Անցնինք:

Ամլութեան իգական պատճառներն են.

1· — Իգափողի անբնական թերութիւններ, որոնք բնական զուգաւորումը կ՚արգիլեն:

2· — Իգափողի պատուուածք:

3· — Արգանդի պարանոցին չեղութիւնը կամ ծռութիւնը:

4· — Արգանդի պարանոցին բորբոքումը որ պատճառ կ՚ըլլայ սերմնակենդանիներու փճացման և մահացման:

5· — Արգանդի ներքնաթաղանթներու բորբոքումներ:

6· — Արգանդի եղջիւրներուն խցումը (գոցուիլ) բորբոքումի հետեւանքով:

7· — Զուարաններու բորբոքում:

8· — Հաւկիթ ածելու անկարողութիւն:

Ու այս պատճառները կը կազմեն ամլութեան 55% տոկոսը:

Վերոյիշեալ պատճառներուն վրայ պէտք է աւելցնել անծանօթ

պատճառներ եւս, որոնց ինչ բլլալը չենք գիտեր։ Որովհետեւ պատահած է որ գոյգեր, որոնք ամուլ մնացած էին տարիներ, ամուսնալուծումէ վերջ կրկին ամուսնութեան առեն զաւակի տէր եղած են։ Հողեկան խառնուածքի տարբերութիւն, ներքնածոր գեղձերու անբնական գործունէութիւն, հողեկան վիճակներ են. կրնան ազդել սերնդագործման բարդ երեւոյթին վրայ։

Հապա դարմա՞ն. ո՛հ, շատ դիւրին է։ Դարմանէ՛ վերոյիշեալ պատճառները, եթէ կրնաս, ու սկսիր համբել ծնունդները, մէկեակները, երկուրեակները, երեակները, քառեակները են. են.։

Հեշտ է այսպէս խօսիլ, և շարլաթաններուն յատուկ ոճ մը։ Անոնք պիտի ըսեն, «ահ տիկին, մի մտահոգուիք, պզտիկ fիւրթաժ մը և դուք մի քանի ամիսէն սիրունիկ և թումպուլիկ տատրակ մը կ՚ունենաք»։

Ա՛խ ինչ ըսեմ, քիւրթաժի սիրահարներուն...ինչ կ՚արժէ քիւրթաժը եթէ արդանդին եղջիւրները դոցուած են։ Ի՞նչ կ՚արժէ թանփօնրմանը, երբ կնոջ ամուսնին ամորձիքները սերմնակենդանի չեն արտադրեր։

Ով կին, ամուլ է՞ս ու կ՚ուզե՞ս զաւակ ունենալ, պարոն ամուսինդ հետդ առ և բժիշկիդ քովը դնա։

Ամուսնուդ սերմը թող քննուի նախ, և յետոյ արդանդիդ եղջիւրներուն դոց կամ բաց բլլալու հարցը թող լուծուի մասնաւոր փորձով մը, յետոյ... դիւրին է մնացածը։

Կը տեսնէ՞ք, կիներն այ բացի դոցի հարց ունին։ Ականջ ունեցողը թող լսէ, թէ ներքուժող սերմնակենդանիին և սիղաճեմօրէն վայրէջք կատարող հաւկիթին միացումին արդելք եղող բոլոր խոչընդոտները պէտք է որ վերնան։

Ահա ամբողջեան դարմանումը։ Ցանեցէք որ հնձէք։

ԲԺ. Ա. ԱԲԻԼԵԱՆ

Պոստրն

ԸՆԹԵՐՑՈՂ

ԴՈՒՆ ՈՐ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»ը, կը կարդաս և կ՚օգտուիս,

ՁԵ՞Ս ՈՒԶԵՐ ՃԻԳ ՄԸ ԸՆԵԼ, տարածելու համար քու թերթդ, բաժանորդագրելով ծանօթներդ, որպէսզի ուրիշներն ալ կարդան, սիրեն և օգտուին «Բուժանք»էն և զարգացնեն զայն։

ԻՍԿ ԴՈՒՆ ՈՐ ՈՒՐԻՇԻՆ «ԲՈՒԺԱՆՔ»Ը ԿԸ ԿԱՐԴԱՍ, գիտցիր որ չի բաւեր կարդալ, այլ պէտք է ունենալ և պահել «Բուժանք»ը, որուն մէկ խորհուրդը կրնայ քանի մը անգամ փոխարինել տուած բաժնեգինդ։

ՈՒՐԵՄՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԻ։